

ՄԱՐՏ 2021

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	9
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	10
2. Առևտրային տնօրինություններ	11
2.1. Բաժանորդների տվյալներ	12
2.2. Հասույթ	12
2.3. Գանձում	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	14
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում	22
3.5. Գոտիավորման աշխատանքներ	23
3.6. Քլորի և խլեղու ջրի մաքրման կայանների ծառայություն	28
3.7 1-85 թեժ գիծ	30
4. Լրատվական ծառայություն	31
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	34
5.1. Փաստաթղթերի մշակում	35
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	35
5.3. Դասընթացներ/սեմինարներ	35
5.4 Ռիսկերի հայտնաբերում/Մեղմացնող միջոցառումների կիրառում	37
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	38
6.1. Համակարգային ցանց	39
6.2. Ինտերակտիվ համակարգ	40

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քաղաք Երևան

Կենտրոն վարչական շրջան

● «Հարավ» ՇՏ «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Սայաթ-Նովայի պողոտա 1ա հասցեում դիտահորում $d=150$ մմ թուջե ջրագծի խցափակման միջոցով վերացվել է գաղտնի վթար, կառուցվել է $d=20$ մմ $L=20$ զծ/մ երկարությամբ նոր ջրագիծ: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=150$ մմ $L=100$ զծ/մ երկարությամբ թուջե խողովակ և խնայվել է մոտ $Q=5$ լ/վրկ ջրաքանակ:

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Սարի Թաղ 3 փողոցում կառուցվել է նոր $d=63$ մմ $L=30$ զծ/մ և $d=20$ մմ $L=80$ զծ/մ երկարությամբ ջրագիծ: Թվով 11 բնակիչ-բաժանորդների ջրաչափերը փոխարինվել և տեղափոխվել են տարածքից դուրս տեղադրված ջրաչափական դիտահորերում:



● Սարի Թաղ 26 փողոցում կառուցվել է $d=63$ մմ $L=170$ զծ/մ երկարությամբ նոր ջրագիծ:



«Շենգավիթ» վարչական շրջան

Երևանյան լճին հարող տարածքով անցնող $D=700$ մմ պողպատե ջրատարը, որը գտնվում էր 7-8 մետր խորության վրա և անցնում էր մեծ թեքություն ունեցող բարդ տեղանքով, քայքայվել էր: Առկա վթարների վերացնելը անհնարին էր տեղանքային բարդությունների պատճառով: «Հարավ» շահագործման տնօրինության աշխատակիցների կողմից կառուցվել է Բագրատունյաց փողոցով անցնող $D=600$ մմ $L=350$ զծ/մ երկարությամբ շրջանցող ջրագիծ: Տեղադրվել են $D=150$ մմ, $D=80$ մմ և $D=50$ մմ փականներ, կառուցվել են $D=150$ մմ $L=12$ զծ/մ և $D=100$ մմ $L=24$ զծ/մ ջրագծեր: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $D=600$ մմ $L=400$ զծ/մ երկարությամբ քայքայված ջրագիծը, բացառվել են ապօրինի ջրամիացումները:





Մարզ Արմավիր

● **Քաղաք Մեծամոր 2** թաղամաս 2Բ շենքը սնող $D=100$ մմ $L=70$ գծ/մ երկարությամբ վթարային վիճակում գտնվող պողպատե խողովակը ներսրսկման միջոցով փոխարինվել է $D=75$ մմ պոլիէթիլենային խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում 9-հարկանի շենքի վերին հարկերում կարգավորվել է ջրի ճնշումը, խնայվել է մոտ $Q=2.5$ լ/վրկ ջրաքանակ:



● **Փոքր Վեդի համայնք** Լ.Ստեփանյան փողոցում գտնվող $D=75$ մմ $L=110$ գծ/մ երկարությամբ պողպատե քայքայված ջրագիծը, որի վրա առկա վթարները ջրի պոտորվածության պատճառ էին հանդիսանում, «Արարատ» հենակետի աշխատակիցների կողմից փոխարինվել է $D=75$ մմ պոլիէթիլենային խողովակներով:



● **Հնաբերդ համայնք** Մյանսիկյան փողոցում գտնվող $D=50$ մմ $L=100$ գծ/մ երկարությամբ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $D=50$ մմ պոլիէթիլենային խողովակներով:

● **Կանաչուտ համայնք** Պ. Սևակի փողոցում գտնվող $D=160$ մմ $L=100$ գծ/մ անորակ պոլիէթիլենային խողովակներով կառուցված ջրագիծը փոխարինվել է նոր $D=160$ մմ ՊԷԹ խողովակներով:



● **Վ. Արտաշատ համայնք** Գյուղապետարանի դիմաց գտնվող D=150մմ L=150գծ/մ երկարությամբ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է D=110մմ L=100գծ/մ երկարությամբ նոր պոլիէթիլենային ջրագծով:



Մարտ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	4966.0
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	28920.0
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	27355.0
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	13980.0
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	5.0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2662.5
Կառուցված ջրագիծ	մ	2732.0
Կառուցված կոյուղագիծ	մ	219.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	53.0
Փոխարինված փական	հատ	25
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	653
Մաքրված դիտահոր	հատ	392
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	160.1
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	997
Ջրահեռացման ցանցում	հատ	2356
Պումպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	446

Մարտ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	538	1016	387

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՓՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մարտ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	295	3	0	1	0	0	0	0	0	299
Փոխարինված	482	26	9	2	5	0	0	0	0	524
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	58	6	1	0	0	0	0	0	0	65
Ընդամենը	835	35	10	3	5	0	0	0	0	888

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 888 ջրաչափ: Կատարված աշխատանքների 94 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարտ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1790	255	0
2	Մաշտոց	1550	284	30
3	Շահումյան	2161	184	0
4	Զեյթուն	720	239	0
5	Շիրակ	1250	423	0
6	Արթիկ	220	57	0
7	Ապարան	0	31	0
8	Ալավերդի	2090	15	0
9	Աշոցք	0	10	0
10	Բերդ	120	7	0
11	Իջևան	880	37	0
12	Լոռի	1510	217	0
13	Նոյեմբերյան	0	17	0
14	Սպիտակ	0	14	0
15	Ստեփանավան	180	14	0
16	Թալին	0	24	5
17	Տաշիր	250	8	0
18	Էջմիածին	0	139	20
19	Չարենցավան	820	87	0
20	Աբովյան	2300	59	0
21	Հրազդան	580	105	0
22	Աշտարակ	2205	18	30
23	Կենտրոն	180	273	6
24	Հյուսիս	0	256	30
25	Հարավ	0	374	0
26	Էրեբունի	0	233	10
27	Արմավիր	0	122	8
28	Արտաշատ	0	102	0
29	Արարատ	0	103	4
30	Մասիս	0	55	0
31	Գավառ	370	23	0
32	Սևան	160	71	0
33	Մարտունի	0	23	0
34	Վարդենիս	0	8	0
35	Ճամբարակ	110	16	0
36	Դիլիջան	30	37	30
37	Վայք	0	17	0
38	Եղեգնաձոր	0	14	8,5
39	Զերմուկ	0	23	0
40	Միսիան	180	60	0
41	Գորիս	0	34	0
42	Կապան	270	79	0
43	Մեղրի	145	27	0
	Ընդամենը	20071	4194	173

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. Սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանում այրվել էր կեղտաջրերի մղման Wilo պոմպի շարժիչը: Այրված շարժիչը ապամոնտաժելուց հետո տեղափոխվեց շարժիչի վերանորոգման արտադրամաս վերանորոգման: Արդյունքում այն վերանորոգվեց և տեղադրվեց պոմպակայանում և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանում շարքից դուրս էր եկել մաքուր ջրի պոմպի խծուծը, և առաջացրել էր ջրի մեծ արտահոսք: Արդյունքում փոխարինվեց խծուծը նորով և այժմ պոմպը աշխատում է բնականոն ընթացքով: Կատարվեց նաև բոլոր սարքավորումների գնում և կարգաբերում:

- Սևան N5 կեղտաջրերի պոմպակայանում պոմպերի արտադրողականությունն ընկել էր: Զննման արդյունքում պարզ դարձավ, որ պոմպի բանվորական անիֆսերին աղբ էր փաթաթվել, որն էլ պատճառ էր հանդիսացել վերոնշյալին: Բանվորական արնիֆսերը մաքրվելուց հետո պոմպերը աշխատեցին բնականոն ընթացքով: Վերանորոգվեց նաև զամբյուղի բարձրացման համար նախատեսված ձեռքի ճախարակը և զամբյուղը:

- Սևան N3 կեղտաջրերի պոմպակայանում խցանվել էին հակադարձ փականները և շարքից դուրս էր եկել d=200 մմ տրամագծի փականը: Արդյունքում մաքրվեցին հակադարձ փականները և վերանորոգվեց d=200 մմ տրամագծի փականը: Արդյունքում պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	81,710	28.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	76,842	19.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	173,025	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	134,575	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	134,765	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	17,151	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	13,039	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	16,300	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	28200	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի գնում և կարգավորում	90
Էլեկտրական սարքերի գնում և կարգավորում	21
Այցեր	2
Պոմպի վերանորոգում	3

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մարտ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար մարտ ամսվա ընթացքում նորոգվել է թվով 1 մեքենայի շարժիչ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 4 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 15 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուոնդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսատնիններ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 23 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 4 մեքենայի մարտկոցները փոխարինվել են նորերով:

Փոխարինվել են թվով 71 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 11 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:



Թվով 6 մեքենա-մեխանիզմների համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ: Վերանորոգվել են թվով 10 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 10 մեքենա-մեխանիզմների վրա:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 4 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 13 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Նորոգվել է թվով 2 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.04.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 535,107 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. մարտ ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	654,423	512,402	78,3
	Իրավաբանական անձ	29,178	22,704	77,8

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	725,410	569,295	78,5
	Իրավաբանական անձ	34,549	23,949	69,3

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Արդյուքում տեղամասերում 2021թ. մարտ ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվը, (այցելությունների թիվը), չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 21,258 բաժանորդով (կամ մոտ 3,7%):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել է տվյալների բազա է մուտքագրվել թվով 752 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մարտ ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3834 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 04.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1421	1854	304	3579
	Իրավաբանական անձ	94	136	25	255
	Ընդամենը	1515	1990	329	3834

Ստուգաչափված ջրաչափ



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ մարտ ամսին փոխարինված 3834 ջրաչափերի մոտ 61%-ը (կամ 2319 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 226,957 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Մարտ ամսին գանձումը կազմել է 1,751 մլն դրամ (102 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարուժները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. մարտ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Մակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ

թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ինչպես նաև ռազմական դրությունը, ընկերությունը մարտ ամսին զերծ է փացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրավող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունների):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Մարտ ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 243 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 35,3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2020թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10383	1371209062	6988	708677071	150	20297541	3454	597564917	4020	348402023

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 67 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.04.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում փետրվար ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	7,551	1,764
Բնակիչ-բաժանորդներ	5,685	1,198
Իրավաբանական անձեր	1,866	566

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 248.4 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2021 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.04.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	690,958	567,558	82.14	33,413	23,942	70.65
	Առանց ջրաչափի	34,452	1,737	5.04	1,136	7	0.62

Տվյալների բազայում 01.04.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	862,923	384,075	44.51	37,337	10,101	27.05

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4841 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1268 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2330	1902	81.6
գ.Պոռշյան	1566	1038	66.1
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5867	1819	32.0

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 8,444, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 7,234, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1080, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,661, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 990, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,329 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3,211 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	400	217,614	34,215,114

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի մարտ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը, որը կազմել է՝ 96.3%, ինչը 0.3%-ով ցածր է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 26 ՃԿՓ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների ցանկը և դրանց գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը, 2021թ-ի մարտ ամսին 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 147 լվ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 117 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 38 047 ԿՎտ/ժ. (7,93%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՅ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փոքր յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 263 հասցե: Ուսումնասիրության արդյունքում թվով 3 հասցեներում հայտնաբերվել են ապօրինի լարանցումներ, որից 2-ի հասցեում կազմված արձանագրությունների հիման վրա վերականգնվել է Ընկերությանը պատճառված 2127.36 կՎտ.ժ-ին համարժեք 94979.47 դրամի գնաճ, իսկ 3-րդի մասով ընթանում է քննություն: Մեկ հասցեում հայտնաբերվել է հավելագրում՝ 2465 կՎտ.ժ, որը ձջվել է «ՀԷՑ» ՓԲԸ հետ: Երեք հասցեներում վերականգնվել է նախկինում կատարված խախտումների հետևանքով պատճառված գնաճի մագրոդային մասը՝ 36400 կՎտ.ժ:

Վերաբացվել է Դավթաշեն 4-րդ թաղ. 46 շ. (հոսքաչափ) մագնիսական հոսքաչափերի էլ. էներգիայի բաժանորդային քարտը:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 1846.02 կՎտ.ժ կամ 8.7%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



● Շիրակ քաղաքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 4270 կՎտ/ժ կամ 13,6 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Կատարված աշխատանքներ

● Թվով 35 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 15 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

● Թվով 395 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 178 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում


● Յոթ հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փախարհվել են ինվերտորային համակարգով:

Խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 37 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● Մարտ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 136,710 կՎտ.ժամ կամ 14,53% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 98,097 կՎտ.ժ/ամիս կամ 5,05 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 995,21 կՎտ.ժ կամ 2,53 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են մարտ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	1229
Կառուցված ջրագիծ	մետր	881
Երևան քաղաքի շենքերի և փողոցների տվյալների բազայի թարմացումներ և ուղղումներ ԱՏՀ-ում	հատ	1
Շահագործումից հանված կոյուղագիծ	մետր	57
Ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	56
Իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	42
Նոր կետերի ավելացում բազայում (ֆիզիկական)	հատ	58
Փականային գոտիների տարանջատման աշխատանքների իրականացում «Հյուսիս» տեղամասի գոտում	տեղամաս	1
Երևան քաղաքի պոմպերի շերտի տեղեկատվության ճշտում	քաղաք	1
Գյումրի քաղաքի հատակագծային տեղեկատվության թվայնացում և տվյալների բազայի ստեղծում՝ ըստ Google Earth ծրագրի	քաղաք	1
Կոտայք և Գեղարքունիք մարզերին պատկանող համայնքների՝ ներքին ջրային ցանցերի, ջրատար համակարգերի և կոյուղատար համակարգերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում	մարզեր	2
Գյումրի և Վանաձոր քաղաքների հիդրավիլի մոդելների կառուցում և բացակա տեղեկատվության հավաքագրում	քաղաք	2

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

Գառնի-Արտաշատ ջրատար

Ջրատարի վրա հայտնաբերվել են վթարներ՝ «Դավաբոյնի» կոչվող հատվածում (10լ/վ) և Գառնու ձորում (30լ/վ): Արտաշատ և Արարատ ՇՏ-ների ձեռնարկած աշխատանքների արդյունքում վթարները վերացվել են:



Արարատյան ջրատար

Ջրատարի վրա Նորաբաց պ/կ-ում վթարվել է D=800մմ փականը, որի ներդիրից առկա էր արտահոսք 5լ/վ:

Գառնի-Երևան ջրատար

Ջրատարի վրա տարբեր հատվածներում առաջացել են մի շարք վթարներ. Նուբարաշենից դեպի Արին-Բերդ ՕԿՁ ջրատարը առանձնացել էր, «Մանչո գրուպի» միացման մոտ առկա էր 5լ/վ վթար, իսկ Նուբարաշենի և Բարձրաշենի միջնամասում՝ 30լ/վ վթար: Վերջին երկու վթարների համար ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ այդ հատվածները փոխարինելու համար: Ջրատարն այդ հատվածներում գտնվում է անմխիթար վիճակում:



Արզական-Քանաքեռ ջրատար

Ջրատարի վրա կազմակերպվել է կանգառ՝ Գետամեջ գյուղում նոր ջրամիացում կատարելու համար, քանի որ ջրատարի այդ կետում ճնշումը ≈ 15 մթն. է:



Մաքրական-Աբովյան ջրատար

Ջրատարի հերթական շրջայցի ժամանակ հայտնաբերվել է վթար՝ ≈ 10 լ/վ, ինչպես նաև մի շարք ապօրինի և անհայտ միացումներ:

Արգնի 1


Ջրատարի կանգառից օգտվելով, որը կազմակերպվել էր ջրատարի շրջանցման համար, «Ջրառի» մասնագետների կողմից վերանորոգվել է Արգնի 1 և Արգնի 2 ջրատարների միջանկյալ միացման D=400մմ փականը:



3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղաք Գյումրի

● Շիրակ տեղամասի և Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղում: Նախկին ապակու գործարանի դիմացով անցնող թուջե հին ջրագիծը ենթակա էր խցափակման, քանի որ տարածքն ապահովված է նոր ջրամատակարարման ցանցով: Արդյունքում միացման տեղը հայտնաբերելուց հետո շահագործումից հանվել են D=200մմ L=160մ թուջե, D=150մմ L=270մ պողպատե և D=65մմ L=280մ պողպատե ջրագծեր: Տնտեսվել է Q = 2-3 լ/վ ջրաքանակ:



● Շիրակ տեղամասի և Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Ռ. Դանիելյան-Մավոյան փողոցների խաչմերուկում D=400մմ «Սեվերնի» ջրագծի վրա հայտնաբերված անհայտ D=150մմ միացումը: Ուսումնասիրություններից պարզվել է, որ այն նախկինում սնուցել է հարակից Անտառավան թաղամասի շենքերը սպասարկող հին, ներկայումս գոյություն չունեցող կաթսայատունը: Խցափակման միջոցով շահագործումից հանվել է D=150մմ, L=790մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է Q = 3-4 լ/վ ջրաքանակ:




● Շիրակ տեղամասի և Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի Բսահակյան 2 շենքի՝ հարակից այգու $D=250$ մմ թուջե ջրագծից միացված $D=50$ մմ պողպատե ջրագիծը: Խցափակման միջոցով շահագործումից հանվել է $D=50$ մմ, $L=50$ մ պողպատե ջրագիծը: Տնտեսվել է $Q=1-1,5$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Սևան

● Նալբանդյան 42 շենքի միացման կետում տեղադրված ծախսաչափի տվյալների վերլուծության արդյունքում շենքի ներսում հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է 1,5 լ/վ քանակությամբ:



● Սևան քաղաքի Նաիրյան և Շինարարներ փողոցներում կատարված ուսումնասիրություններից հետո հայտնաբերվել են մի քանի վթարներ, որոնք վերացնելուց հետո տնտեսվել է ≈ 1 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Հրազդան



● Հրազդան քաղաքում իրականացված աշխատանքների արդյունքում Զորավար Անդրանիկ փողոցում հայտնաբերվել են 2 անհայտ միացումներ և 1 վթար ընդհանուր 1լ/վ քանակությամբ:



● Հրազդան-Աբովյան ջրատարի վրա վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Վերին Աղբյուրակ գյուղի պոմպակայանի մոտ հայտնաբերվել է 10լ/վ քանակությամբ վթար



Քաղաք Երևան





● Արաբկիր տեղամասում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Մալխասյանց նրբանցք 25 հասցեի մոտ հայտնաբերվել է վթար, որը վերացվել է $D=25$ մ, $L=30$ մ ՊԷ խողովակի ներարկումով, ինչի արդյունքում տնտեսվել է $Q=6$ լ/վ ջրաքանակ:


● Արաբկիր տեղամասում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Սոսեի 8 հասցեում գտնվող ՊԿ-ից դեպի նույնանուն շենքի մուտքագծի վրա հայտնաբերվել է վթար: Ներարկման միջոցով փոխարինվել է նշված $D=50$ մմ և $L=20$ մ հատվածը արդյունքում տնտեսելով 2 լ/վ ջրաքանակ:



● Շենգավիթ տեղամասի հետ կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Բագրատունյաց 4-րդ նրբանցք 38-րդ շենքի մոտ, որը վերացվել է երկկողմանի խցափակումով շահագործումից հանելով մոտ $L=100$ մ վթարային ջրագիծ և $D=40$ մմ տրամագծով անհայտ ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է $Q=6$ լ/վ ջրաքանակ:



● Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Օտյան 53 հասցեի դիմաց: Փոխարինվել է D=50 մմ և L=4մ խողովակ տնտեսելով Q=1,5լ/վ ջրաքանակ:




● Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ կատարած ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար Դուրյան փողոց 7 հասցեի դիմաց: Կատարվել է D=32 մմ ջրագծի վթարված հատվածի փոխարինում: Արդյունքում տնտեսվել է Q= 1,5լ/վ ջրաքանակ:


● Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Անդրանիկի 52 շենքի դիմաց: Փոխարինվել է D=200 մմ վթարված պողպատի խողովակի L=2,5մ հատվածը տնտեսելով Q = 5-6լ/վ ջրաքանակ:




● Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ կատարած ուսումնասիրություններից պարզվել է, որ Կուրդինյան 21/2 շենքի մոտ գտնվող չգործող մանկապարտեզի մուտքագծի վրա առկա է Q=3լ/վ գաղտնի վթար, որը վերացվել է խցափակելով չգործող մանկապարտեզի ջրագիծը և շահագործումից հանելով ևս 1 պոմպ:




● Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ կատարած ուսումնասիրություններից պարզվել է, որ Բաֆֆի 85 հասցեում առկա է գաղտնի վթար $D=200$ մ ջրագծի վրա: Շահումյան ՇՏ աշխատակիցների կողմից այն վերացվելուց հետո տնտեսվել է $Q = 13$ լ/վ ջրաքանակ:




● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ Կենտրոն 1-ի գոտուց սնվող և Մայաթ-Նովա փողոցով անցնող 200մ ջրագծի վրա տեղադրվել է $D=100$ մ ՃԿՓ և շահագործումից հանվել է $L=400$ մ և $D=200$ մ տրամագծով ջրագիծ արդյունքում տնտեսելով $Q = 6$ լ/վ ջրաքանակ:




● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ կատարած աշխատանքների արդյունքում վթար է հայտնաբերվել Տերյան-Թումանյան խաչմերուկում (Կենտրոն 1-ին գոտի): Խցափակվել է անհայտ ծագման $D = 50$ մ տրամագծով ջրագիծ և տնտեսվել է $Q = 6$ լ/վ ջրաքանակ:



● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ կատարած աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է Իսրայելյան 43 շենքի տակով անցնող $D=100$ մ անհայտ ջրագիծ, որը խցափակվել է: Արդյունքում տնտեսվել է $Q = 2$ լ/վ ջրաքանակ:



● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ կատարած ուսումնասիրությունների արդյունքում Նոր Նորքի 7-րդ և 9-րդ զանգվածներում ՃԿՓ-ի տեղադրման և տեղափոխման արդյունքում տնտեսվել է ընդհանուր 8լ/վ ջրաքանակ:



3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Վանաձոր քաղաքի Չուխադյան փողոցի, Լագեր և Դիմաց թաղամասերի անխափան ջրամատակարարումն ապահովելու նպատակով «Լոռի Սպիտակ Ջուր» և «Լոռի Ղաղրի Ջուր» ՋՄԿ-ներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● 2019 թ-ին «Լոռի Ղաղրի Ջուր» ՋՄԿ-ում՝ ռեազենտ տնտեսությունում տեղադրված Polydos 412-1000 ծծմբաթթվական այլումինից լուծույթ պատրաստող սարքավորման արտադրողականությունն ինժեներական հաշվարկների և կատարված համապատասխան աշխատանքների արդյունքում 10 կգ/ժ-ից բարձրացվել է մինչև 30 կգ/ժ, որպեսզի այն (մինչ նոր սարքավորումների տեղադրումը) հաշվարկային հզորությանը համապատասխանող Grundfos ֆիրմայի արտադրության դոզատոր պոմպի և նոր կառուցված ծծմբաթթվական այլումինի լուծույթ մղող խողովակաշարի միջոցով ապահովի հարակից տարածքում գտնվող «Լոռի Սպիտակ Ջուր» ՋՄԿ-ի մշակվող ջրի կոագուլավորման գործընթացը:
Ստորև ներկայացված է կատարված աշխատանքների ամփոփ նկարագիրը.

● Polydos 412-1000 ծծմբաթթվական այլումինից լուծույթ պատրաստող սարքավորմանը մաքուր ջուր սնող ջրագծի վրա տեղադրվել է պոմպ:



● KD 440 կրի լուծույթ պատրաստող սարքավորմանը մաքուր ջուր սնող ջրագծի վրա նույնպես տեղադրվել է պոմպ:



● Կառուցվել է ծծմբաթթվական այլումինի լուծույթ մղող խողովակաշար:



Թվարկված աշխատանքների արդյունքում մշակված ջրի պղտորությունը 1000 NTU-ից հնարավոր է հասցնել թույլատրելի սահմանների:



մինչ մաքրումը և մաքրումից հետո

● Ալյափարս քլորակայանում փոխարինվել է քլորի համակարգի խափանված անկյունային փականը և ինժեկտորը, որպեսզի կայունանա հեղուկ քլորի համակարգի աշխատանքը:



● Ակներ քլորակայանում փոխարինվել է հեղուկ քլորի խողովակը D=2մ և անկյունային փականը՝ հեղուկ քլորի անխափան աշխատանքը իրականացնելու համար:



● Գետափնյա քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով՝ իրականացվել է հիպոքլորիդի համակարգի ցիրկուլացիոն պոմպի փոխարինում:



● Շիրականուտ քլորակայանում իրականացվել է ջրի մակարդակի տվիչի և ստլենոիդ փականի վերանորոգում և փոխարինում, ինչի արդյունքում կապահովվի պահեստային հիպոքլորիդի համակարգի անխափան աշխատանքը:



● Քաղաք Գավառում՝ Հացառատում կոռոզիայից խուսափելու նպատակով իրականացվել են ներկարարական աշխատանքներ (նկ.1), իսկ Սարուխանում վերականգնվել է արտաքին լուսավորությունը (նկ.2):




նկ. 1



նկ. 2

● Անվտանգության կանոններից ելնելով՝ Ուրցաձորում իրականացվել է թեքված էլ. սյունների ուղղում:



● Լոռի քլորակայանում 4.5 կգ/ժ արտադրողականությամբ դրգատորը փոխարինվել է 1 կգ/ժ արտադրողականությամբ դրգատորով՝ քլորի չափաբաժինը ավելի ստույգ կարգավորելու նպատակով:



● Ավան, Բաբաջանյան 3/1 հասցեում հեղուկ քլորի համակարգի համար ֆտորոպլաստից պատրաստվել են 2500 հատ հեղուկ քլորի միջադիրներ:



● Քաղաք Մեղրիի «Մեթենց աղբյուր» կապտաժների շուրջը մաքուր պահելու նպատակով իրականացվել են սան. գոտու մաքրման աշխատանքներ:



● Քաղաք Վայքում՝ Հեր-Հերում քլորացման սարքին ճնշումային ջուր ապահովելու նպատակով պոմպը փոխարինվել է նորով (նախկինը շարքից դուրս էր եկել և ճնշում չէր ապահովում):



● Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում իրականացվել է հեղուկ քլորի վակուումի կարգավորիչի վերանորոգում հետագա շահագործման նպատակով:



● Քաղաք Եղեգնաձորի «Գետափ» քլորակայանում իրականացվել է քլորացված ջրագծի վերանորոգում, քանի որ շահագործման հետևանքով դետալները մաշվել էին, առաջացել էր արտահոսք:



3.7 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 35740 զանգ, որից առևտրային բնույթի զանգերը՝ 12002: Երևան քաղաքի համար եղել է 9573 զանգ:

● Մարտ ամսվա Երևանի ցուցանիշը կազմել է 79,8%, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2429 զանգ (20,2%): Շահագործման վերաբերյալ ստացվել է 23738 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 18021 զանգ (75,9%), իսկ մարզերինը՝ 5717 զանգ (24,1%):

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

		Ստորաբաժանում	
Առևտրային	Ընդամենը		12002
	ԵՐԵՎԱՆ		9573
	ՄԱՐԶԵՐ		2429
Շահագործում	ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ		23738
	ԱՐԵՎԵԼՔ		10893
	Շենգավիթ		2276
	Կենտրոն		3557
	Հյուսիս(Ավան, Նոր Նորք)		1255
	Էրեբունի		1774
	Պոմպ		485
	Մարզեր		1546
	այդ թվում Կոյուղու վթար		65
	այդ թվում Դիտահորի խցանում		3132
	ԱՐԵՎՄՈՒՏՔ		12845
	Արարկիր		2367
	Քանաքեռ-Զեյթուն		1274
	Մաշտոց		2390
	Շահումյան		1725
	Պոմպ		918
	Մարզեր		4171
	այդ թվում Կոյուղու վթար		63
	այդ թվում Դիտահորի խցանում		4233
	Ընդամենը		

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



սպառողին ավելի հասկանալի, իսկ գործն ու արդյունքները՝ ընդունելի դարձնելը: Դրա համար շարունակաբար ներկայացվել են գործունեության տարբեր ուղղությունների վերաբերյալ հրապարակույթներ: Մասնավորապես, գարնանային անձրևային սեզոնին ընդառաջ անձրևատար համակարգի մաքրումը, հիպոքլորիդի կիրառմամբ աշխատող փոքր քլորակայանների կարևորությունը, բակային պոմպակայաններում նոր, ինվերտորային պոմպերի տեղադրումը, Արգնի-Երևանի ջրատարի վրա փականի փոխարինումը, շինարարությունում նոր տեխնոլոգիաների կիրառումը: Իսկ Արթիկի քաղաքապետարանից Վեոլիայի շահագործման տեղամասի պետին հանձնված Պատվոգիրը կոչված է ցույց տալու մեր սերտ կապն ու համագործակցությունը տեղական կառավարման մարմինների հետ ու վերջիններիս գնահատականը մեր աշխատանքին:

Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունի Բնակիչների սպասարկման թիվ 1 գրասենյակում հաճախորդների հերթերը կարգավորող տերմինալի շահագործումը, որն ուղղակի առնչվում է սպասարկման որակի բարձրացմանը և կանխարգելում կորոնավիրուսի տարածումը այցելուների շրջանում: Տերմինալի տեղադրմանը հաջորդած կարճ ժամանակամիջոցն անգամ ցույց տվեց նորամուծության դրական արդյունքները:

Բնականաբար, մարտին հանրությանը պարբերաբար ներկայացվել է նաև համակարգում առաջացող վթարների վերացումը, խնդիրների լուծումը, ջրանջատույթների մասին տեղեկատվությունը, թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունը, ապօրինությունների հայտնաբերումը և այլն:

Այս բոլոր հրապարակույթների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Բաժնի կողմից մշակվել է Ընկերության Ղեկավար անձնակազմի համար նախատեսվող Վեոլիա Գրուպի «Ճգնաժամի կառավարման ընթացակարգի» վերաբերյալ հեռավար դասընթացի պրեզենտացիան:

● ՈԱԱ Բաժինը, ղեկավարվելով «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի հոդված 30-ի 2-րդ մասի ա) և բ) կետերի, ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարի 18-ը հունիսի 2015 թվականի N 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» 5-րդ կետի 3) մասի պահանջներով Ընկերության Գլխավոր տնօրենի 02.03.2021թ-ի N 15L հրամանով հաստատվել է «Վեոլիա Ջուր Ընկերության 2021 թվականի հակահրդեհային միջոցառումների իրականացման պլանը», որն արդեն գործածության մեջ է դրվել Ընկերության ստորաբաժանումներում:

● Այս շրջանակներում ՈԱԱ Բաժինը մշակել է Ընկերության ստորաբաժանումներում կիրառելի է «Հրդեհային անվտանգություն» պոստերը: Նաև մեկնարկել են Ընկերության ստորաբաժանումներում տեղադրված կրակմարիչների տարեկան ստուգման և զննման աշխատանքները:

● Միաժամանակ լրամշակվել է Ընկերության ղեկավարության համաձայնեցմանն են ներկայացվել Ընկերության 8 վարչական շենքի թվով 10 տարահանման պլանները:

● Հաշվետու ամսում Բաժինը մշակել է Ընկերության ղեկավարության համաձայնեցմանն է ներկայացրել Ընկերության Արտադրական վտանգավոր օբյեկտների 2021 թվականի ընթացքում նախատեսվող տեխանվտանգության փորձաքննության աշխատանքների թվով 5 տեխնիկական մասնագիր:

● Բաժինը մշակել է նաև անմիջականորեն ջրի մաքրման, վարակազերծման և ցանցի սպասարկման հետ առնչվող Ջրմուղների կառույցների աշխատողների, ինչպես նաև արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի փասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների համար 2021 թվականին նախատեսվող բժշկական հետազոտությունների և զննության տեխնիկական մասնագրերը:

5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ


● Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանումներից ՈԱԱ Բաժնին ներկայացվել են կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

● Շարունակվել են Ընկերության ստորաբաժանումներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:

5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ

● Բաժինը Ընկերության «Հարավ» և «Երևան» շահագործման տնօրինության տեղամասերի թվով 19 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Ժամանակի կառավարման գործիքակազմ» հեռավար դասընթաց:

● Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «ԱՊՄ-ների, անվտանգության այլ միջոցների դերը և նշանակությունը: Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջները» դասընթացը, որին մասնակցեց 21 աշխատող Ընկերության «Հյուսիս» և «Երևան» շահագործման տնօրինության տեղամասերի պետեր և ինժեներատեխնիկական անձնակազմ:



● Բաժինը «Երևան», «Հարավ», «Հյուսիս» շահագործման տեղամասերի և ԿՄԿ և ՋՍ վարչության թվով 59 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց, որից հետո մասնակիցները լրացրեցին դասընթացի յուրացման գնահատման հարցաշար:



● Բաժինն իրականացրեց «Ամբարձման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի եվ «Ամբարձիչ սարքավորումների անվտանգ շահագործման պահանջներ» առկա դասընթացները ՋՍԳՍ, ԿՄԿ և ՋՍՎ Քն ԽՋՄԿ ծառայությունների թվով 37 աշխատակցի համար:




● Ընկերության ղեկավար անձնակազմի և տարբեր ստորաբաժանումների ղեկավարներից թվով 9 աշխատող մասնակցեց Վեոլիա Գրուպի կողմից կազմակերպված «Veolia Purpose in Motion workshop» հեռավար դասընթացին:

● ՈԱԱ բաժնի անվտանգության պատասխանատուն մասնակցեց Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում կազմակերպված ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների աշխատակազմի ստորաբաժանումների մասնագետների «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պատրաստվածության բարձրացման հարցերը» թեմայով հնգօրյա հեռավար դասընթացին:

Պետք է նշել, որ վերոնշյալ դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացի մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարը կրեցին դիմակներ:

2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.4. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին Անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 35 վարչական շենքում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:

● Բաժնի համակարգմամբ, էլեկտրոնային անվտանգության ռիսկերի կանխարգելման անհրաժեշտությունից, 05/03/2021 թվականին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի Կենտրոն և նորք Մարաշ ստորաբաժանման մասնագիտացված խմբի կողմից «Ձորաղբյուր-ԵրՀԷԿ» սանգոտում իրականացվեցին չոր, վթարային ծառերի հեռացման աշխատանքները:

2021 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Մարտ ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականաց հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- Մասնակցություն է ցուցաբերվել «Վեոլիա» Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի ժողովին: Քննարկվել են արդիական SS վտանգները և խմբի SS անվտանգության նախագծերը:

- Մասնակցություն է ցուցաբերվել «Վեոլիա» Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված EDR ծրագրային ապահովման ներդրման պլանավորման ժողովին՝ քննարկվել են ներդրման փուլը, հնարավոր խնդիրները և այդ խնդիրների լուծումները:

- Ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկից առանձնացվել և բաշխվել են սարքավորումների մի մասը: Փոխարինվել են փչացած մոնիտորներ և հնամաշ համակարգիչներ կազմակերպության աշխատակիցների մոտ:

- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Ստեղծվել են նոր օգտանուններ veolia.com G Suite համակարգում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի աշխատակիցների համար:

- Մեկնարկել է կապի ծառայությունների մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների նպատակային օգտագործումն և սակագների ուսումնասիրությունը:

- Իրականացվել է Ավանի պահեստի տեսահսկման համակարգի ուսումնասիրություն և ներկայացվել է նախագիծ այդ տեսահսկման համակարգի արդիականացման համար՝ հաշվի առնելով մեծ տարացքի տեսահսկման անհրաժեշտությունը:

- Մեկնարկել է հաճախորդների սպասարկման գրասենյակների համար հերթերի կառավարման EarlyOne համակարգի ներդրման գործընթացը

- «Վեոլիա» Խմբի IT անվտանգության կողմից ստեղծվել է կիբեր հարձակումներին հակազդելու համար արագ արձագանքման խումբ, որը ներառում է «Վեոլիա» Խմբի ամեն մի երկրների IT և IT անվտանգության բաժիններից մի քանի մասնագետներին: Մեր կողմից տրամադրվել են Հայաստանում գործող «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի համակապատասխան մասնագետների կոնտակտները:

- Իրականացվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ում գործող բոլոր համակարգիչների և դյուրակիր համակարգիչների վրա Proxy Server կարգավորումների ավտոմատ կարգավորումների իրականացման նախագիծը:

- Համակարգում առկա բոլոր համակարգիչների համար կիրառվել է Proxy սերվերի կարգավորումների ավտոմատ տեղադրման համար նոր խմբային քաղաքականությունների փաթեթ: Այդ փաթեթը թույլ է տալիս՝

- ▶ Ավտոմատ տեղադրել Proxy սերվերի կարգավորումները օգտատերի ինտերնետի կարգավորումների մեջ եթե այդ օգտատերը գտնվում է ինտերնետի հասանելիության խմբի մեջ

- ▶ Ավտոմատ հանել Proxy սերվերի կարգավորումները օգտատերի ինտերնետի կարգավորումների մեջից եթե այդ օգտատերը գտնվում է համապատասխան հատուկ խմբի մեջ

- ▶ Ավտոմատ տեղադրել Proxy սերվերի կարգավորումները դյուրակիր համակարգիչներում այն դեպքում եթե դյուրակիր համակարգիչը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ցանցի ներսում է և ավտոմատ հանել այդ կարգավորումները այն դեպքում երբ դյուրակիր համակարգիչը միացված է այլ ցանցին

- Kaspersky հակավիրուսային համակարգում իրականացվել են նոր կարգավորումներ: Այսուհետ ընկերության բոլոր համակարգիչների և սերվերների վրա որոնց վրա տեղադրված է Kaspersky հակավիրուսային համակարգ չեն գործելու 3G/4G USB մոդեմները և արգելափակվել է TeamViewer (և նմանակի) ծրագիրը:

- Մեկնարկել է 2 նոր տեստային CromeBook սարքերի գնման գործընթացը՝ «Վեոլիա» Խմբի SATAWAD նախագծի շրջանակներում:

- Ավարտվել է Ջրաչափական սարքերի հեռավար կառավարման մոդուլի համար մրցույթի տեխնիկական նյութերի նախապատրաստումը:

- Հայտարարվել է Ջրաչափական սարքերի հեռավար կառավարման և տվայլների հավաքագրման մրցույթ, կազմակերպվել են հանդիպումներ մրցույթի մասնակիցների հետ որոնք ներկայացրել են լուծումներ և նախագծեր:

- Մեկնարկել է առցանց վճարումների մոդուլի տեստավորումները - տրամադրվել է համապատասխան տեստային սերվերների հասանելիությունը վճարման համակարգի սերվերներին և բարեհաջող իրականացվել է փորձնական վճարում տեստային համակարգերով

- Իրականացվել է ուսումնասիրություն առցանց վճարումների մոդուլի հասանելիության հնարավոր խափանումների նվազեցման ուղղությամբ: Կազմակերպվել է հանդիպում Cloudflare կազմակերպության տեխնիկական և վաճառքի մասնագետների հետ և քննարկվել է «Load Balancing» և այլ պրոդուկտների՝ որոնք կարող են նպաստել առցանց վճարումների մոդուլի հասանելիության հնարավոր խափանումների ռիսկերի նվազեցմանը, այդ պրոդուկտների տեխնիկական մանրամասներ, ներդրման տարբերակներ և գնային քաղաքականություններ:

- Արևտրային տնօրինության «Էջմիածին» տեղամասում կազմակերպվել և իրականացվել են լարանցման

աշխատանքներ հեռախոսային կապի ապահովման նպատակով

● Ստեղծվել և ներկայացվել է Մարդկային Ռեսուրսների Կառավարման բաժնի IT բաժնի աշխատակիցների ամենամյա արձակուրդների նախնական պլանը:

● Մեկնարկել է «Վեոլիա» Խմբի IT անվտանգության կողմից ձեռնարկած «Top 25» ինդուստրիալ համակարգերի կիրժեռ անվտանգության նախագիծը որի նպատակն է «Վեոլիա» Խմբի 25 երկրներում ակտիվ զարգացնել և բարելավել ինդուստրիալ համակարգերի կիրժեռ անվտանգությունը: Հայաստանը ներառվել է այդ 25 երկրների ցանկի մեջ: Նախագծի շրջանակներում կազմակերպվել է մի շարք հանդիպումներ և մեկնարկել է անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը:

● Մեկնարկել է նոր համակարգչային տեխնիկայի տեխնիկական մանրամասների ճշգրտման գործընթացը հետագա գնման գործընթացի կազմակերպման համար:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Մարտ ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Կատարվել են մի շարք ծրագրային թարմացումներ ինտերակտիվ համակարգում:

● Ինտերակտիվ համակարգում ներդրված բջջային համարների նոր համակարգի շնորհիվ՝ հնարավորություն ընձեռնվեց բոլոր ազատված աշխատակիցների բջջային համարներն արգելափակել, որով ընկերությունը տնտեսեց մեծ գումարներ՝ շուրջ 400 հեռախոսահամար, որոնց համար ընկերությունը նախկինում կատարում էր վճարումներ:

● Ինտերակտիվ համակարգում ներդրվել է Բոդրամ վճարային համակարգը, որի միջոցով բաժանորդները կկարողանան վճարումներ կատարել ընկերության կայքում:

● Բանակցություններ են տարվում այլ բանկերի հետ՝ այլընտրանքային վճարային համակարգ ունենալու ուղղությամբ: SS վարչության կողմից մշակվում է նաև նոր ծրագրային կապուղի բոլոր բանկերի և վճարային կազմակերպությունների հետ առցանց եղանակով վճարված տեղեկատվություն ստանալու նպատակով, ինչպես նաև բաժանորդների պարտքը առցանց եղանակով տրամադրելու ուղղությամբ, ինչով և հնարավորություն կստեղծվի վերահսկելու ընկերության հաշվին մուտագրվող գումարներն առցանց եղանակով:

● SS վարչության կողմից կատարվել է ուսունասիրություն ջրաչափերի հեռակառավարվող տեսականն իրականացնելու նպատակով: Մի շարք ուսունասիրություններ իրականացնելուց հետո՝ վարչությունը պատրաստել է տեխնիկական բնութագրեր պիլոտային մրցույթ հայտարարելու համար: Մրցույթին ներգրավվել են հինգ ընկերություններ, որոնք իրենց առաջարկներն են ներկայացրելու հեռակառավարվող ջրաչափերի պիլոտային ծրագիրն իրականացնելու համար:

● Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է մարտ ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Իախտման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	2	3.9	0.7
Էրեբունի	8	4.7	0.8
Շենգավիթ	15	2.6	0.4
Կենտրոն	5	2.8	0.5
Արաբկիր	9	7.4	1.3
Մաշտոց	10	7.4	1.2
Շահումյան	21	9.3	1.6
Քանաքեռ-Զեյթուն	1	1.5	0.3
ԱՎԲ	104	94.5	16.7
Շիրակ	40	9.8	1.7
Արթիկ	7	4.2	0.7
Արարատ	28	2.8	0.5
Աբովյան	82	59.9	9.5
Հրազդան	26	11.5	1.2
Ալավերդի	2	1.6	0.3
Արտաշատ	23	3.0	0.5
Գավառ	5	1.0	0.2
Գորիս	2	0.8	0.1
Եղեգնաձոր	2	0.8	0.1
Էջմիածին	8	2.9	0.5
Իջևան	3	0.2	0.0
Մասիս	7	2.2	0.4
Արմավիր	9	4.8	0.8
Վայք	1	0.3	0.0
Աշտարակ	7	2.1	0.3
Չարենցավան	1	0.3	0.0
Ընդամենը	428	242.4	40.3

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ). Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է մարտ ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջանոթություն		Մնասրբություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	11	4.56	51	0.33
Էրեբունի	25	25.37	83	0.40
Ծենգավիթ	18	6.97	122	3.60
Կենտրոն	13	26.46	57	0.30
Սրաբկիր	12	6.84	146	1.62
Մաշտոց	22	6.73	98	0.64
Շահումյան	5	1.47	61	1.43
Քանապետ-Ջեյթուն	1	0.18	22	0.16
Լոռի	11	2.65	25	0.15
Ծիրակ	20	7.73	65	0.34
Արթիկ	6	2.58	19	3.49
Արարատ	1	0.26	13	0.16
Աբովյան	12	2.35	65	0.31
Հրազդան	13	1.58	32	1.39
Մլավերդի	1	0.26	11	0.02
Սշոցք	2	1.03	11	0.05
Մպարան		-	9	0.04
Սրտաշատ	2	0.17	28	0.20
Բերդ		-	3	0.01
Գավառ	3	0.52	26	0.35
Գորիս	3	1.29	8	0.03
Դիլիջան	1	0.52	8	0.03
Եղեգնաձոր	2	0.77	12	0.08
Էջմիածին	9	3.07	53	0.30
Թալին		-	2	0.01
Իջևան	6	0.41	20	0.07
Կապան	1	0.26	7	0.89
Ճամբարակ	2	0.19		-
Մասիս	5	2.08	31	0.15
Մարտունի		-	2	0.02
Նոյեմբերյան		-	5	0.02
Սրմավիր	17	5.61	116	0.65
Ջերմուկ		-	2	0.01
Սևան	9	1.40	26	0.10
Վայք	2	0.52	10	0.06
Սշտարակ	3	0.57	16	0.08
Չարենցավան	6	1.29	17	0.03
Սիսիան	1	0.26	7	0.05
Սպիտակ	1	0.13	18	0.12
Ստեփանավան	6	2.58	11	0.13
Տաշիր		-	7	0.04
Ընդամենը	252	118.65	1325	17.83



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am